

## Ուղիղ, հատված, ճառագայթ, բեկյալ գծեր: Մաս 2

**Ուղիղը** ծայրակետեր չունի:

**Ուղիղ-չունի** ո՛չ սկիզբ, ո՛չ էլ վերջ:

**Օրինակ՝** հորիզոնը:


Գծապատկերով նշում ենք նրա մի մասը:

**a ուղիղ**

a

---

**Հատվածը** ուղղի մաս է: Այն ունի 2 ծայրակետ:



**Հատվածը** ունի սկիզբ, ունի վերջ:


- Հատվածը գծելու համար նշենք A և B կետեր, այնուհետև օգտագործելով քանոնը, դրանք միացնող գիծ տանենք: Կստանանք A և B ծայրակետերով հատված: Ասում ենք AB հատված:
- Հատվածի ծայրակետերը նշանակում են լատիներեն մեծատառերով՝ A, B, C, D, ...

Գծապատկերով նշում ենք հատվածն ամբողջությամբ:

**AB հատված**



Եթե AC հատվածի երկարությունը 3 սմ 2մմ է, իսկ BC հատվածինը՝ 8 սմ 4 մմ, ապա AB հատվածի երկարությունը կլինի՝  
 $|AB| = 3 \text{ սմ } 2 \text{ մմ} + 8 \text{ սմ } 4 \text{ մմ} = 11 \text{ սմ } 6 \text{ մմ}$



**Ճառագայթը** ուղղի մաս է: Այն ունի միայն մեկ ծայրակետ, որը նրա սկզբնակետն է:

Գծապատկերով նշում ենք նրա մի մասը:

**Ճառագայթը** ունի սկիզբ, բայց չունի վերջ:


**A ճառագայթ**

A




**Օրինակ՝** արևի ճառագայթը:

**Բեկյալ գծեր**



Հաջորդաբար իրար միացած հատվածները կազմում են մի պատկեր, որը կոչվում է **բեկյալ գիծ**, իսկ այդ հատվածների երկարությունների գումարը

կոչվում է **բեկյալ գծի երկարություն**:



Եթե AB հատվածի երկարությունը 3 սմ 2մմ է, BC հատվածինը՝ 4 սմ 3 մմ, իսկ CD հատվածինը՝ 5 սմ 4 մմ, ապա **բեկյալ գծի երկարությունը** կլինի՝

3 սմ 2մմ+4 սմ 3 մմ+ 5 սմ 4 մմ =12 սմ 9 մմ:

### **Առաջադրանքներ**


1. AC հատվածի երկարությունը 5 սմ 8մմ է, BC հատվածինը՝ 11 սմ 5 մմ: Գտիր AB հատվածի երկարությունը:



2. AB հատվածի երկարությունը 29 սմ 9 մմ է, AC հատվածը՝ 9 սմ 6 մմ: Գտիր CB հատվածի երկարությունը:




3. Որքա՞ն է CD հատվածի երկարությունը, եթե  $|AD|=144$  սմ,  $|AB|=24$  սմ,  $|BC|=75$  սմ:



4. Հաշվիր BC հատվածի երկարությունը, եթե  $|AD|=198$  մմ,  $|AB|=45$  մմ,  $|CD|=72$ մմ:



5. Հաշվեք բեկյալ գծի երկարությունը, եթե AB հատվածի երկարությունը 6 սմ 3 մմ է, BC հատվածինը՝ 5 սմ 9 մմ, իսկ CD հատվածինը՝ 8 սմ 7 մմ:



6. AC հատվածի երկարությունը 11սմ 3մմ է, BC հատվածինը՝ 24 սմ 8 մմ: Գտիր AB հատվածի երկարությունը:



7. AB հատվածի երկարությունը 40սմ 5մմ է, AC հատվածը՝ 19սմ 8մմ: Գտիր CB հատվածի երկարությունը:



8. Որքա՞ն է CD հատվածի երկարությունը, եթե  $|AD|=200$  սմ,  $|AB|=25$  սմ,  $|BC|=55$  սմ:



9. Հաշվեք բեկյալ գծի երկարությունը, եթե AB հատվածի երկարությունը 7սմ 2մմ է, BC հատվածինը՝ 5սմ 8մմ, իսկ CD հատվածինը՝ 9սմ 3մմ:

10. Միբեկի սովորողներ, այժմ ինքներդ կազմեք նմանատիպ առաջադրանքներ: